« 25 » օգոստոս 2025թ. No 5125 - Ա

«ՇԻԶՈՏԻՊԻԱՅԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԻՆՏՈՒԻՑԻԱՅԻՑ ԴԵՊԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Սեպտեմբերի 3, 2025թ., ք. Երևան (Հոգեսոցիալական կարգավորման կենտրոն՝ Նալբանդյան 47, բն. 16)

«Ամբրա» հոգեկան բարեկեցության կենտրոն ՀԿ,

Հայկական հոգեբուժական ասոցիացիա

- Թիրախային լսարան՝ հոգեբույժներ, հոգեթերապևտներ, , նյարդաբաններ, թմրաբաններ, կլինիկական հոգեբաններ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ մինչև 60 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 2 տեսական կրեդիտ.

  դասավանդող Ստեփան Մաթևոսյանին՝ ՇՄԶ 2 տեսական կրեդիտ
- Կոնտակտ 094333941

16:30-17:30	**Դասախոսություն** Շիզոտիպիկ խանգարման սահմանումը և կլինիկական պատկերը. էպիդեմիոլոգիա, հիմնական ախտանիշներ (ճանաչողական աղավաղումներ, ռեֆերենտալություն, կախարդական մտածելակերպ): Սահմանները. տարբերակիչ ախտորոշում շիզոֆրենիայի, աուտիզմի սպեկտրի խանգարման (ASD), սահմանային անձնային խանգարման (BPD), հոգեպաթիայի հետ: Ախտորոշման ուղեցույցներ միջազգային դասակարգումներում (ICD-10, ICD-11, DSM-5): Ախտորոշման սխալներ. Հիպերդիագնոստիկա՝ դեռահասների անցողիկ տարօրինակության, մշակութային ֆենոմենների սխալ գնահատական: Հիպոդիագնոստիկա՝ «անհանգստադեպրեսիվ ֆոնի» տակ թաքնված դեպքեր, շիզոֆրենիայի բաց թողնված պրոդրոմալ փուլեր: Շիզոտիպիկ խանգարում ախտորոշելու ալգորիթմ
17:30-17:45	Ընդմիջում
17:45-18:45	**Դասախոսություն** Արհեստական բանականությունը՝ որպես օբյեկտիվացման գործիք: Ուսումնասիրվում են՝ • Խոսքի վերլուծությունը. տվյալների հիման վրա հայտնաբերվում են՝ իմաստային անկապություն, փոխաբերականություն, լատենտ զառանցանքային նմուշներ (NLP ալգորիթմներ): • Նեյրոպատկերում + ԱԲ. բիոմարկերներ «դեֆոլտ ռեժիմի ցանցում» (DMN) և կորտիկո-ստրիատալ ուղիներում: • Թվային ֆենոտիպեր. սոցիալական ակտիվության և շարժողական անոմալիաների մոնիթորինգ սմարթֆոնների միջոցով: • Կլինիկական դեպքերի վերլուծություն. տրվում են սխալ ախտորոշումների օրինակներ՝ պարզաբանումներով, թե ինչպես կարող էր օգնել ԱԲ-ն: • ԱԲ-ի սահմանափակումները. էթիկա, «սև արկղ» (black box), ալգորիթմական նախապաշարմունքների ռիսկ

Դասավանդող՝ Ստեփան Մաթևոսյան: